ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԳԼԽԱՎՈՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐՈՎ ՆԱՎԹԻ ԵՎ ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՏԱՐԱՆՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները ի դեմս Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 1994 թվականի դեկտեմբերի 17-ի՝ Էներգետիկ խարտիային կից Պայմանագրով եւ Տարանցման կարգի մասին 1992 թվականի փետրվարի 8-ի՝ Համաձայնագրով,

հաշվի առնելով նավթի եւ նավթամթերքների ազատ տարանցման ապահովման անհրաժեշտությունը՝ անկախ դրանց ծագումից, նշանակման վայրից եւ տիրոջից,

ընդունելով նավթով եւ նավթամթերքներով սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ժողովրդական տնտեսությունները ապահովելու նպատակով համաձայնեցված միջոցների իրականացման կարեւորությունը,

Տնտեսական միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 24-ի Պայմանագրի դրույթների հետագա իրագործման նպատակով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար ստորեւ նշված հասկացությունները ունեն հետեւյալ նշանակությունները.

"տարանցում"՝ մի Կողմի տարածքում ծագող նավթի եւ նավթամթերքների տեղափոխումը Կողմերից մեկի տարածքով երրորդ Կողմի սպառողների համար,

"նավթի եւ նավթամթերքների մայրուղային խողովակաշարեր"՝ գծային սողնակներով եւ կատոդային պաշտպանության կայաններով, շտեմարանային տարողություններով եւ առանց դրա պոմպային կայաններով, նավթի եւ նավթամթերքների խողովակաշարերի հսկողության եւ կառավարման կետերով, դրանց վրա արտադրատեխնոլոգիական կապով, նավթի եւ նավթամթերքների խողովակաշարերի սպառողների էլեկտրամատակարարման գծերով, նավթի եւ նավթամթերքների խողովակաշարերի անվտանգությունն ապահովող վերանորոգման-շահագործման կետերով եւ ենթակառուցվածքով, ընդունման եւ հանձնման, դատարկման, լցման եւ բեռնման կետերով նավթի եւ նավթամթերքների խողովակաշարեր,

"նավթամթերքներ"՝ նավթի մշակումից ստացված պատրաստի արտադրանք:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը միջոցներ են ձեռնարկում իրենց պետությունների տարածքներով խողովակաշարային տեղափոխման ժամանակ նավթի եւ նավթամթերքների ազատ տարանցման ապահովման նպատակով: Կողմերից մեկի տարածքով տարանցումով մատակարարվող նավթը եւ նավթամթերքները չեն կարող օգտագործվել այն Կողմի կարիքների համար, որի տարածքով իրականացվում է տարանցումը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերի գլխավոր խողովակաշարերով նավթի եւ նավթամթերքների տարանցումը իրականացվում է բազմակողմ եւ երկկողմ արձանագրություններին համապատասխան՝ համաձայնեցնելով տարանցման ծավալները եւ գրաֆիկները՝ դրանց արտադրության ծավալների հաշվառմամբ:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը միջոցներ են ձեռնարկում նավթի տարանցման եւ նավթամթերքների տեղափոխման համար հաշվարկները ժամանակին ապահովելու նպատակով:

Նավթի տարանցման համար հաշվարկները իրականացվում են Կողմերի միջեւ համաձայնեցված սակագներով եւ կատարվում են Կողմերի տնտեսվարող սուբյեկտների միջեւ կնքված պայմանագրերի հիման վրա:
Նավթամթերքների տեղափոխման համար հաշվարկները կատարվում են Կողմերի տնտեսվարող սուբյեկտների միջեւ կնքված պայմանագրերի հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 5

Նավթի հաշվառման, ընդունման, հանձնման, տեղափոխման, պահպանման, բեռնման համար գործողությունների անցկացումը, ինչպես նաեւ նավթի խողովակաշարերի ռեժիմների եւ նավթի հոսքերի օպերատիվ կառավարումը իրականացվում է Կողմերի միջեւ համաձայնեցված նորմերով եւ կանոններով:

ՀՈԴՎԱԾ 6

Վթարային իրավիճակների ծագման դեպքում Կողմերը միմյանց օգնություն եւ օժանդակություն են ցուցաբերում դրանց հետեւանքների վերացման գործում: Վթարային իրավիճակների պատճառով տեղափոխվող նավթի եւ նավթամթերքների կրճատված ծավալները բաշխվում են կնքված պայմանագրերով նախատեսված ծավալներին համամասնորեն: Վթարների արդյունքում նավթի եւ նավթամթերքների կորուստները, ինչպես նաեւ վթարների հետեւանքների վերացման վրա կատարված ծախսերը փոխհատուցում են վթարներում մեղավոր կազմակերպությունները: Վթարների պատճառները պարզվում են հատուկ ստեղծվող հանձնաժողովի կողմից՝ շահագրգիռ Կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ:
Վթարների արագ վերացման համար Կողմերը իրավունք են տալիս նավթի եւ նավթամթերքների խողովակաշարերի օբյեկտների վթարավերականգնողական ստորաբաժանումներին շահագրգիռ Կողմի տարածք ազատ կերպով ներմուծել եւ/կամ արտահանել սարքավորումներ եւ նյութեր՝ այդ ստորաբաժանումների տեխնիկական զինվածության տաբելին համապատասխան: Ընդ որում, Կողմերը պարտավորվում են չկիրառել մաքսային տուրքեր, մաքսային այլ վճարումներ եւ դրանց համարժեք գանձումներ, ինչպես նաեւ նշված սարքավորումների եւ նյութերի վրա ոչ սակագնային բնույթի սահմանափակումներ:
Մաքսային տուրքերով եւ գանձումներով չեն հարկվում նավթը եւ նավթամթերքները, որոնք անհրաժեշտ են տեխնոլոգիական ծավալների լրացման համար նավթի եւ նավթամթերքների գլխավոր խողովակաշարերում վթարների վերացման դեպքում:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը միջոցներ են ձեռնարկում, այդ թվում համատեղ, նրա համար, որպեսզի Կողմերից որեւէ մեկը չկանգնի նավթի եւ նավթամթերքների մատակարարման աղբյուրներից անջատման սպառնալիքի տակ եւ վնաս չհասցվի նավթ եւ նավթամթերքներ մատակարարող պետությունների, տարանցման եւ սպառող մասնակից պետությունների շահերին:
Կողմերը պարտավորվում են նավթի եւ նավթամթերքների տարանցման համար ապահովել խողովակաշարային տրանսպորտի օբյեկտների անխափան եւ անվտանգ գործունեությունը:
Նավթի եւ նավթամթերքների խողովակաշարերի օբյեկտները շահագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը կարգավորվում է Կողմերի ազգային օրենսդրություններով կամ Կողմերի միջեւ կնքված համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերը պարտավորվում են միակողմանի կարգով որոշումներ չընդունել, որոնք կհանգեցնեն տարանցման պայմանների վատթարացմանը: Նավթի եւ նավթամթերքների

տարանցման հետ կապված վեճի ծագման դեպքում, որի կարգավորումը նախատեսված չէ տնտեսվարող սուբյեկտների միջեւ կնքված համապատասխան պայմանագրերում, Կողմերը պարտավորվում են չդադարեցնել եւ չկրճատել դրանց մատակարարումը մինչեւ վեճի կարգավորումը: Կողմերը պարտավորություն չեն կրում տնտեսվարող սուբյեկտների կողմից տարանցման իրականացման հետ կապված պայմանագրերից բխող իրենց պարտավորությունների կատարման համար:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ կիրառման հետ կապված Կողմերի միջեւ վեճերը, ինչպես նաեւ Կողմերի իրավունքները եւ պարտավորությունները շոշափող վեճերը, կկարգավորվեն շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցություններ եւ բանակցություններ անցկացնելու միջոցով կամ միջազգային իրավունքի նորմերով, սույն Համաձայնագրով եւ Էներգետիկ խարտիային կից Պայմանագրով նախատեսված այլ ընթացակարգերի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրը բաց է նրան մասնակցելու շահագրգռված եւ սույն Համաձայնագրից բխող պարտավորությունները ստանձնելու պատրաստակամ պետությունների կողմից միանալու համար: Միացումը համարվում է ուժի մեջ մտած ավանդապահի կողմից համապատասխան ծանուցումը ստանալու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում այլ միջազգային պայմանագրերին համապատասխան Կողմերի ստանձնած պարտավորությունները:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից եւ ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 13

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն 6 ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով ավանդապահին՝ կարգավորելով սույն Համաձայնագրից առաջացած ֆինանսական եւ այլ պարտավորությունները:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1996 թվականի ապրիլի 12-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագիրը ստորագրել է վերապահումով. "12-րդ հոդվածից բացառել "... ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից ... "":

** Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1998 թվականի փետրվարի 17-ից: